ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2023 թվականի N 1141 - Ա

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ՝

1) «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա կազմակերպվող՝ «Մեր ժամանակների հերոսը» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման հետ կապված ծառայությունների գնումը համարվում է խորհրդատվական ծառայություն, և դրա ձեռքբերումն իրականացվում է օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով՝ չկիրառելով նախաորակավորման ընթացակարգ.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված գնման գործընթացի ընտրված մասնակցի կողմից ներկայացվելիք որակավորման և պայմանագրի ապահովման չափերը, ինչպես նաև կանխավճարի մարման կարգը սահմանվում և հրավերով

նախատեսվում են գնահատող հանձնաժողովի որոշմամբ, պայմանով, որ որակավորման ապահովման չափը չի կարող պակաս լինել գնման կանխատեսվող և հրավերով սահմանված գնի հինգ, իսկ պայմանագրի ապահովման չափը՝ տասը տոկոսից: Ընտրված մասնակցի գնային առաջարկը կանխատեսվող գինը գերազանցելու դեպքում սույն ենթակետով նախատեսված ապահովման չափերը հաշվարկվում են գնային առաջարկի նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ